ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 05.08.2019թ. հ.01/317 գրության, տեղեկացվում է, որ Ֆուչիկի փողոցի հ.23 շենքում Երևանի քաղաքապետարանի 2017-2018թթ. ծրագրերով կատարվել են վերականգնման-ամրացման աշխատանքներ:

Բնակիչներից ստացված բողոքների և դիմումների հիման վրա Երևանի քաղաքապետարանի պատվերով «Հուսալի կամար» ՍՊ ընկերության կողմից 2019թ. կատարվել են շենքի կրկնակի հետազոտման աշխատանքներ և տարբեր մուտքերի և հարկերի բնակարաններում և սանդղավանդակներում նկատելի ճաքերի վրա տեղադրվել են փարոսիկներ: Ըստ փարոսիկների արդյունքների՝ նստվածքային երևույթները շենքում շարունակվում են:

Առաջացած նստվածքները՝ մաշված ջրակոյուղատար մաշված խողովակաշարերից ջրի արտահոսքի հետևանքներ են: Մեծ նշանակություն ունի նաև այն, որ բնակիչները նկուղներում հատակները փորել և իջեցրել են՝ բարձր առաստաղով նկուղներ ունենալու նպատակով, որն էլ բերել է առանց այն էլ ոչ բավարար խորությամբ գտնվող հիմքերի պաշտպանվածության նվազեցմանը՝ հիմքեր ներհոսող կոյուղաջրերի նկատմամբ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ առաջարկվել է շենքի կառավարման մարմնին՝ իրականացնելու կոյուղատար խողովակների փոխարինման աշխատանքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ